«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր, կրթությունը և դաստիարակությունը դպրոցում

Առարկան՝ Ռուսաց լեզու

Հետազոտող ուսուցիչ՝ Բարեկյան Վալենտինա Նիկոլայի

Ուսումնական հաստատություն՝ ՀՊՄՀ հենակետային վարժարան (ավագ դպրոց)

ԵՐԵՎԱՆ 2023

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ. ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ 7
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 16
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2001 թվականի դեկտեմբերի 17-ին ընդունված «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» ՀՀ օրենքի չորրորդ հոդվածով որպես պետական քաղաքականության սկզբունք ամրագրվել է բնապահպանական կրթության պարտադիր բնույթը կրթական համակարգի բոլոր մակարդակներում, դրա շարունակականությունը, նաև համալիր բնույթը[1]: Օրենքի ընդունումը խթանեց բնապահպանական կրթության գաղափարախոսության ձևավորումը՝ ստեղծելով իրավական հիմքեր մեր երկրում այդ գործընթացի համակարգված իրականացման համար: Սակայն օրենքի կիրառման արդյունավետությունը մնում է ցածր, իսկ պատճառները մանրամասն ուսումնասիրության և վերլուծման կարիք ունեն:

Միանշանակորեն պետք է արձանագրել՝ բնապահպանական կրթությունը պետք է ունենա ոչ միայն կրթական ու դաստիարակչական, այլև իրազեկման նշանակություն, ինչպես նաև պետք է ապահովի մասնագիտական կադրերի պատրաստման համապատասխան մակարդակ: Վերոնշյալ օրենքի ընդունումից ութ տարի հետո, կարևորելով բնապահպանական կրթության անհրաժեշտությունը, առաջ քաշվեց «Բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ամբողջական ու միասնական ազգային համակարգի ստեղծման» հայեցակարգ[2], որն ամենևին էլ չկրճատեց բնապահպանական խնդիրների քանակը. չնվազեց օդի աղտոտվածության աստիճանը, չդադարեցին անթույլատրելի անտառահատումները, քաղաքի կանաչ գոտիների հաշվին սրճարանների ու ժամանցի վայրերի կառուցումը:

Ներկայումս Հայաստանը կանգնած է զգալի մարտահրավերների առաջ, որոնք միտված են խթանալու և բարելավելու երկրում բնապահպանական կրթությունը[3]: ՀՀ ակտիվ ներգրավումը մի շարք միջազգային բնապահպանական, կրթական ու տեղեկատվական համաձայնագրերին, ինչպես նաև ՄԱԿ-ի ԵՏՀ «Կրթություն հանուն

---

[1] Տե՛ս «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» ՀՀ օրենքը, http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=1006:

[2] Տե՛ս «Բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ամբողջական ու միասնական ազգային համակարգի ստեղծման» հայեցակարգը, http://www.gov.am/files/meetings/2009/4087.pdf:

[3] Տե՛ս Հայաստանի գետերի և վտակների կենսաբազմազանության ուսումնասիրությունը. Հայաստանում բնապահպանական կրթության մոդել, Երևան, 2010, էջ 1:

կայուն զարգացման» ռազմավարության գործընթացներին, նույնպես պահանջում է առաջնային ուշադրություն դարձնել բնապահպանական կրթությանը:

Ներկայումս աստիճանաբար խորանում են ինչպես համընդհանուր, այնպես էլ տարածաշրջանային և տեղային բնապահպանական հիմնախնդիրները, որոնք արտահայտվում են հասարակության և բնության կապերի համակարգում հակասությունների առաջացմամբ: Բնապահպանական հիմնախնդիրների թվում են.

- կենսոլորտային կենսաբազմազանության կրճատումը,
- մարդկանց առողջական վիճակի վատացումը,
- շրջակա միջավայրի աղտոտումը արդյունաբերական թափոններով, լրացուցիչ էներգիայով,
- կենսոլորտի կենսաբազմազանության կրճատումը և այլն[4]:

Ձևավորվող նոր բնապահպանական քաղաքականությունը ենթադրում է ներկա ու ապագա սերունդների համար էկոլոգիապես անվտանգ ու մաքուր շրջակա միջավայրի ապահովումը, որն առանց բնապահպանական կրթության ու դաստիարակության հնարավոր չէ իրագործել: Մարդու աշխատանքային գործունեության հետևանքով շրջակա միջավայրը մեծ վնասներ է կրում՝ չհասցնելով վերականգնվել, ինքնամաքրվել: Այստեղից էլ առաջ է գալիս շրջակա միջավայրի պահպանության խնդիրը, որին անմիջականորեն առնչվում է բնապահպանական կրթությունը: «Բնապահպանական կրթությունը ուսումնական գործընթաց է, որն ավելացնում է մարդկանց գիտելիքները և տեղեկացվածությունը շրջակա միջավայրի և նրա հետ կապված մարտահրավերների մասին, զարգացնում է անհրաժեշտ գիտելիքները և մասնագիտացումը մարտահրավերներին դիմակայելու համար և դաստիարակում է վերաբերմունք, մոտիվացիա, պարտավորություն՝ կայացնելու տեղեկացված որոշումներ և ձեռնարկելու պատասխանատու միջոցառումներ»[5]:

Թեմայի արդիականությունը: Բնապահպանական կրթությունը անընդմեջ գործընթաց է, որը սովորողներին ոչ միայն զինում է բնապահպանական անհրաժեշտ գիտելիքներով, այլև զարգացնում է նրանց գործնական կարողությունները,

---

[4] Տե՛ս И. Д. Лаптев, Экологические проблемы: социально-политический и идеологический аспект, Москва, 1982, с. 132:

[5] Բնապահպանական կրթությունը մարզագետիններում և արոտավայրերում. Ուսուցիչների վերապատրաստման ձեռնարկ, Երևան, 2012, էջ 4:

ապահովում է համապատասխան վարքագիծ և ձևավորում, արմատավորում է բնապահպանական մշակույթ՝ հնարավորություն տալով լուծել բնությանն ու շրջակա միջավայրին առնչվող բազմաթիվ խնդիրներ, տեսնել և գնահատել բնապահպանական խախտումները և այլն: Եթե մարդը ունենա բնապահպանական համապատասխան գիտելիքներ, հնարավորինս զերծ կմնա էկոլոգիական սխալներ անելուց: Թեմայի արդիականությունը պայմանավորված է ներկայումս աշակերտներին բնապահպանական գիտելիքներ տալու անհրաժեշտությամբ:

Մեր ուսումնասիրության նպատակն է քննել բնապահպանությունը որպես մարդկության հիմնախնդիր՝ անդրադառնալով բնապահպանական կրթության ու դաստիարակության առանձնահատկություններին: Նշված նպատակից բխում են ուսումնասիրության հետևյալ խնդիրները.

- ✓ ուսումնասիրել բնապահպանական կրթության ու դաստիարակության առանձնահատկությունները,
- ✓ քննել բնապահպանությունը որպես մարդկության կարևոր հիմնախնդիր,
- ✓ բացահայտել բնապահպանական դաստիարակության առանձնահատկությունները դպրոցում:

Այսպիսով՝ մեր ուսումնասիրության հիմնախնդիրն է բացահայտել, թե ինչպես է հնարավոր ձևավորել և աշակերտին տալ բնապահպանական ոլորտի գիտելիք ռուսաց լեզվի դասերին: Սրանից բխում է մեր հետազոտության հարցը՝ ինչպե՞ս կազմակերպել բնապահպանական գիտելիքի զարգացման դաս ռուսաց լեզվի դասընթացում: Մենք ուսումնասիրում ենք նշված թեման՝ բացահայտելու համար բնապահպանական կրթության ու դաստիարակության նպատակը սովորողների մտածողության զարգացման, աշխարհաճանաչողական գիտելիքների և աշխարհայացքի ձևավորման անհրաժեշտությամբ: Ոչ միայն ռուսաց լեզվի, այլև մի շարք առարկաների դասավանդման ընթացքում ուսուցիչները հատուկ ուշադրություն պիտի դարձնեն բնապահպանական գիտելիքների զարգացմանը, քանի որ ներկայումս շատ կարևոր է կրթել ու դաստիարակել այնպիսի սերունդներ, որոնց համար բնությունը արժեք է, իսկ բնության պահպանությունը՝ կարևոր նպատակ: Նշվածից կարող ենք բխեցնել մեր հետազոտության վարկածը՝ բնապահպանական գիտելիքի

ձևավորման ու զարգացման կարևոր ուղիներից մեկը ռուսաց լեզվի դասընթացում արտադասարանական պարապմունքների կազմակերպումն է բնության գրկում:

Եթե տարրական և միջին դպրոցներում բնապահպանական կրթությունը իրականացվում է բնագիտական առարկաներին ինտեգրման սկզբունքի հիման վրա, ապա ավագ դպրոցում, որը դեռևս ձևավորման փուլում է բնապահպանական կրթության մեթոդաբանությունը և համապատասխան ուսուցման ծրագրերի և ձեռնարկների մշակումը և ներդրումը մնում է կրթական գործողությունների օրակարգում: Միջնակարգ դպրոցում տրվող տեսական գիտելիքներից բացի անհրաժեշտ է կազմակերպել գործնական դասընթացներ՝ բնության բաղադրիչները ճանաչելու, բնության մեջ վարվելակերպի կանոններին ծանոթանալու, ձեռք բերված տեսական գիտելիքները գործնականում կիրառելու համար:

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ. ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Գիտամանկավարժական գրականության մեջ բնապահպանական դաստիարակության նպատակը սահմանվում է որպես բնության, նրա հարստության, շրջակա միջավայրի նկատմամբ խնայողական և հոգատար վերաբերմունքի ձևավորում և անձի ակտիվ գործունեության մշակում, որը դրսևորվում է բնության նկատմամբ գիտակցական վերաբերմունքի մեջ որպես ամենօրյա վարքի կանոն: Մարդկանց ողջ կյանքն առնչվում է բնությանը: Մարդը սնվում է բնության բարիքներով, շենքեր է կառուցում և հագուստ կամ այլ իրեր պատրաստում բնությունից ստացած նյութերով: Բնությունը հարուստ է անտառներով, օգտակար հանածոներով, բազմաթիվ բույսերով ու կենդանիներով, որոնք անսպառ չեն: Ուրեմն պետք է խնայողաբար օգտվել այդ բարիքներից, հոգատարություն ցուցաբերել բնության նկատմամբ:

Բնապահպանական կրթությունը առաջադրում է հետևյալ խնդիրները.

- ✓ ձևավորել էկոլոգիապես առողջ ապրելակերպով, վարքով ու գործունեությամբ անհատ,
- ✓ հետազոտել համակարգի բնապահպանական խնդիրները՝ առաջադրելով լուծման ուղիներ,
- ✓ ձևավորել ու զարգացնել բնապահպանական իրավիճակներ վերլուծելու հմտություններ, որոնք կնպատակաուղղվեն միջավայրի վիճակի գնահատմանն ու շրջակա միջավայրի պաշտպանությանը,
- ✓ ձևավորել հուզական վերաբերմունք բնության՝ որպես համամարդկային արժեքի հանդեպ,
- ✓ արմատավորել բարոյական ու հոգատար վերաբերմունք բնության նկատմամբ:

Հարկ է նկատել, որ վերոնշյալ սահմանումները լիարժեքորեն չեն արտահայտում բնապահպանական դաստիարակության բովանդակությունն ու նպատակը: Բնապահպանական կրթության ու դաստիարակության գլխավոր նպատակը անձի կողմից բնության և հասարակության փոխազդեցության համակարգի ըմբռնումն է, քանի որ բնապահպանական դաստիարակության գործընթացը

ներառում է նաև բնության նկատմամբ անձի պատասխանատվության և հուզակամային որակների ձևավորումը:

Մարդկային պահանջմունքները, ի հակադրություն ռեսուրսների, անսահմանափակ են, բնապահպանական կրթության շրջանակներում պետք է մշակել համապատասխան գաղափարներ, մեթոդներ, որոնց միջոցով հնարավոր կլինի իրականացնել այնպիսի գործունեություն, որը կնպաստի բնության և շրջակա միջավայրի պահպանմանը: Այս տեսություններից մեկը նոոսֆերային տեսությունն է, որը գտնում է, որ մարդկությունը պետք է համախմբվի մարդ-բնություն-հասարակություն մասնիկների ներդաշնակ զարգացման գաղափարի շուրջը, ու մարդկանց մոտ պետք է ձևավորվի նոոսֆերային գիտակցություն, որը հնարավորություն կտա չվնասելու հետագա սերունդների շահերը: Դպրոցական դասընթացը ցույց է տալիս, որ մակերեսային են աշակերտների գիտելիքները և պատկերացումները հատկապես տեղական բուսատեսակները ճանաչելու, նկարագրելու և որոշելու հարցում: Ահա թե ինչու ուսուցիչը աշակերտներին պետք Է ծանոթացնի տեղի բուսականության հաճախ հանդիպող, ինչպես նաև անհետացման եզրին կանգնած տեսակներին, «Կարմիր գրքին», «Անտառային օրենսգրքին», «Բուսական աշխարհի մասին», «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքներին և մի շարք այլ օրենքների ու օրենսդրական ակտերի, տեղեկություններ հաղորդի Հայաստանում ստեղծված արգելոցների, արգելավայրերի մասին:

Այսօր անհրաժեշտ է ցույց տալ աշակերտին մատուցվող նյութի արդիականությունն ու կիրառելիությունը առօրյա կյանքում, որպեսզի նա հասկանա թե ինչ իմաստ ու նշանակություն ունի նշված առարկայի շրջանակներում ստացած գիտելիքը հասարակական կյանքում[6]: Հետևաբար՝ «ինչ սովորեցնել» խնդրից առաջ գալիս է «ինչի համար սովորեցնել» խնդիրը, այսինքն՝ ուսուցիչը պետք է հատուկ նպատակով նյութն ընտրի ու համապատասխան սկզբունքով այն մատուցի, որ սովորողի ստացած գիտելիքը նրան օգտակար լինի իրական կյանքում և ապագայում:

Ցավով պետք է արձանագրել, որ դպրոցում երեխաները ստանում են բնապահպանական գիտելիքներ, սակայն ոչ բոլոր դեպքերում են նրանք կարողանում իմացածը կիրառել: Այս առումով ուսումնական գործընթացում կարևոր է զարգացնել

[6] Մ. Դավթյան և ուրիշներ, Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ, Երևան, 2004, էջ 7:

միջառարկայական (օրինակ՝ ռուսաց լեզվի ու շրջակա միջավայրի, կենսաբանության ու աշխարհագրության միջև) կապերը: Բնապահպանական ուղղվածություն ունեցող ոչ ավանդական դասաժամերին անհրաժեշտ է կազմակերպել թեմատիկ դասեր, բնության պահպանման վերաբերյալ միջոցառումներ, որոնց միջոցով սովորողների մեջ կստեղծվի ակտիվ քաղաքացիական դիրքորոշում բնության նկատմամբ: Կարելի է կազմակերպել խաղային մրցույթներ արշավների և էքսկուրսիաների ժամանակ: Դասերի արդյունավետությանը նպաստում են նաև բնապահպանության մասին տեսանյութերի ներկայացումը, դիտումը:

Բնապահպանական կրթությունը կշահեր, եթե դասագրքերին կից գունավոր ներդիրների տեսքով ներկայացված լինեին քարտեզներ, բույսերի, կենդանիների նկարներ, մասնավորապես այն տեսակների, որոնք ներառված են «Կարմիր գրքում»: Նման ճանաչողական մոտեցումը կնպաստեր բնապահպանական գիտակցության զարգացմանը, ինչպես նաև սովորողի մեջ կզարգացներ այն ընկալումը, որ ինքը ևս կարող է որևէ կերպ ազդել բնության ու շրջակա միջավայրի վրա: Նպատակային կլինի նաև բնապահպանական օրացույցի կիրառումը ուսումնական գործընթացում: Տարվա ընթացքում հանդիպում են հատուկ օրեր, որոնք բնապահպանները նշում են աշխարհի մի շարք երկրներում, օրինակ՝ «Անտառների միջազգային օր» (մարտի 21), «Թռչունների միջազգային օր» (ապրիլի 1), «Երկրի օր» (ապրիլի 22), «Կենսաբազմազանության պահպանման օր» (մայիսի 22), «Շրջակա միջավայրի համաշխարհային օր» (հունիսի 5), «Անապատացման - երաշտի դեմ պայքարի համաշխարհային օր» (հունիսի 17), «Կենդանիների պաշտպանության համաշխարհային օր» (հոկտեմբերի 4) և այլն: Սովորողներին պարբերաբար պետք է ոչ միայն ներկայացնել բնապահպանական տոները՝ նշելով դրանց նշանակությունը, այլև դրանց մասնակցելու նախագծեր կազմել:

Խրախուսելի կլինի, եթե բնապահպանական կրթության տարբեր գործընթացների (օրինակ՝ ծառատունկերի) ակտիվ մասնակիցներ լինեն նաև սովորողների ծնողները: Վերջիններիս դերը կրթական գործընթացի արդյունավետության վրա չափազանց մեծ կլինի այն առումով, որ կապահովվի բնապահպանության կրթության անընդհատությունը թե՛ ուսումնական հաստատությունում, թե՛ ընտանեկան միջավայրում:

Բնապահպանական կրթության շրջանակներում ուսուցման տարրերի ինտեգրումը հնարավոր է դարձնում լուծել կրթական մի շարք խնդիրներ և զարգացնել դասավանդման մեթոդիկան, որի շնորհիվ առավել արդյունավետորեն կապահովվեն գիտելիքի բովանդակության կապն իրական կյանքի հետ, ուսումնական նյութի ընկալումն ու սովորողների հետաքրքրասիրության բարձրացումը: Ուսուցման նոր մեթոդների, ժամանակակից տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունների գործադրումն առավել մատչելի ու նպատակային է դարձնում բնապահպանական գիտելիքի յուրացումը: Բնապահպանական կրթությունն ու դաստիարակությունն առաջին հերթին կարևորվում են սովորողների դաստիարակության և առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորման տեսանկյուններից:

Բնության տարրերի ու երևույթների ուսումնասիրությունը, սովորողի աշխարհայացքի համակարգված ձևավորմանը զուգահեռ, պետք է հնարավորություն ընձեռի բնության մեջ, դասարանում կամ տանը դիտումների, փորձերի և այլ տարաբնույթ գործնական աշխատանքների միջոցով սովորողի մեջ զարգացնելու Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված ճանաչողության մեթոդները: Բնության անկենդան և կենդանի տարրերի, մարդու, Երկիր մոլորակի՝ որպես մարդկության ընդհանուր տան, ուսումնասիրությունը անհրաժեշտ է իրականացնել՝

ա) սովորողի շրջապատում (տուն, բնակավայր, բնական լանդշաֆտ) դիտվող բնության տարրերի և երևույթների դիտարկումների, պարզունակ փորձերի նկարագրության,

բ) սովորողի կողմից սեփական օրգանիզմը ճանաչելուն, առողջության պահպանմանը և անվտանգ կենսագործունեություն ծավալելուն ուղղված ուսումնական գործունեության տեսակների իրականացման,

գ) իր շրջապատը հետազոտելու տարրական կարողությունների ու դրանց վերաբերյալ ինքնուրույն եզրահանգումների կատարման ապահովման,

դ) Հայաստանի բնության բազմազանության, բնական ու հասարակական օբյեկտների ու երևույթների վերաբերյալ տարրական գիտելիքների ձևավորման,

ե) մայրցամաքների հայտնագործման ու հետազոտության մասին պատմությունների միջոցով:

Ռուսաց լեզվի դասերին միջառարկայական կապերի գործադրման երեք կարևոր, միմյանց չկրկնող և չբացառող ձևեր կամ եղանակներ կան: Այդ ձևերից առաջինը ուսումնական գործընթացում ներառարկայական կապերի ճիշտ կիրառումն է: Այն, ինչ աշակերտներն անցել են նախորդ դասին կամ դասերին, հետևողականորեն պիտի կրկնվի, ամրապնդվի, դառնա կարողություն, հիմք ծառայի նորի յուրացման համար և կապվի նորի հետ: Սա ուսուցման գործընթացի գիտական կազմակերպման նոր պահանջ է և հետևողականորեն պետք է պահպանվի ռուսաց լեզվի բոլոր դասերի ընթացքում: Աշակերտներն առաջին օգնությունը կարող են և պիտի ստանան դաընթացից վերցրած այն գիտելիքներից, փորձից ու լեզվական ընդհանուր պաշարից, որը նրանք կուտակել են տարիների ընթացքում, և որը պետք է գործողության մեջ դնել, վերհիշել, կապել նորի հետ, լրացնել ու ամբողջացնել նախկինում ձեռք բերածը:

Միջառարկայական կապերի կիրառման մյուս եղանակը, որի գործածումը ևս կարևոր է ռուսաց լեզվի դասերին, ձեռք բերված գիտելիքների ու կարողությունների փոխանցումն է: Սա նույնպես աշակերտի ունեցածի, ձեռք բերածի և կուտակածի նպատակահարմար և արդյունավետ օգտագործման պահանջն է՝ գիտելիքների և կարողությունների բնագավառում: Այնպես, ինչպես ամեն դասարանում աշակերտին գրել-կարդալ չենք սովորեցնում, որովհետև առաջին դասարանում ա սովորել է, այդ կարողություններն ունի, և դրանք վստահորեն պետք է օգտագործել ուսուցման գործընթացում, այնպես էլ բազմաթիվ գիտելիքներ ու կարողություններ, որոնք ձեռք է բերել առաջ, հմտորեն պետք է կիրառել ուսուցման գործընթացում ընդհանրապես և ռուսաց լեզվի դասերին մասնավորապես: Գիտելիքների և կարողությունների այսպիսի փոխանցումը և օգտագործումը պետք է դիտել որպես միջառարկայական կապերի կիրառության կարևոր ձևերից մեկը և վստահորեն կիրառել տարրական դասարանների ռուսաց լեզվի դասերին՝ հավատացած լինելով, որ այն մեծ օգուտ կարող է տալ ինչպես ճանաչողական, այնպես էլ դաստիարակչական:

Միջառարկայական կապերի կիրառման երրորդ ձևը այլ գիտությունների տվյալների կիրառումն է, որը նույնպես կարող է գործադրվել ուսումնական գործընթացում:

Ռուսաց լեզվի գրքերում, ընթերցարաններում տարբեր տեսակի նյութեր են կիրառված, որոնք ճանաչողական ու դաստիարակչական այլևայլ խնդիրներ ունեն, և

ըստ այդմ՝ դրանք պիտի ուսումնասիրվեն դասերի ընթացքում: Ուսուցիչը եթե ցանկանում է՝ իր պարապած լեզվի դասը լիարժեք և նպատակային լինի, կամա թե ակամա պիտի դիմի տարբեր գիտությունների տվյալների ու փաստերի օգտագործմանը, որպեսզի դասը հետաքրքրական, ուսանելի ու դաստիարակչական դառնա թե՛ բովանդակության և թե՛ լեզվի տեսանկյունից: Այդ տարբեր գիտությունների ցանկը կարող է շատ ընդարձակ և համառոտ լինել, դրանից վերցված փաստերն ու տեղեկությունները սխեմատիկ և ծավալուն լինեն. այդ ամենը կախված է ուսուցչից, նրա գիտելիքների պաշարից, նրա մանկավարժական-մեթոդական վարպետությունից: Երբեմն նույն նյութի շուրջ մեկ ուսուցիչ կարող է շատ բան տալ աշակերտներին, հարստացնել նրանց մտավոր և լեզվական պաշարը, իսկ մեկ ուրիշը, ընդհակառակը, շատ քիչ բան տալ, որովհետև նա կարող է տալ միայն այն և այնքանով, ինչքան որ նա ունի, կամ որքանով որ կարողանում է նա իր ունեցածը աշակերտներին հասցնել: Այստեղ կարևոր է այն հանգամանքը, որ ռուսաց լեզուն տարրական դասարաններում ներառում է կամ ընդհանրացնում, իրենով ներկայացնում աշխարհաճանաչողական գիտելիքների ամբողջ համակարգը, և ուսուցիչը այդ հանգամանքը պետք է նկատի ունենա և իրականացնի իր աշխատանքի ընթացքում՝ կիրառելով բոլոր այն աշխարհաճանաչողական գիտելիքների իր իմացած տվյալները, որոնք անհրաժեշտ կլինեն նյութերի ուսումնասիրման ընթացքում:

Առարկան – Ռուսաց լեզու 4

Թեման – արտադասարանական ընթերցանություն բնության գրկում

Թեման –Ջրի շրջապտույտ

Նպատակը

Զրուցելով ջրի կարևորության մասին՝ երեխաների մեջ ձևավորել որոշակի գիտելիքներ ջրի առաջացման, նրա հատկությունների և անհրաժեշտության մասին:

Զրույցի ընթացքում անպայմանորեն նշել, որ ջուրը կարևոր է մարդկանց, կենդանիների և բույսերի համար: Մարդիկ ջուրն օգտագործում են խմելու, մաքրության, լողանալու, ծաղիկները, բույսերը խնամելու նպատակով: Խմելու համար օգտագործում են մաքուր ջուր, որը ջրատար խողովակներով հոսում է դեպի բնակարաններ:

Դասի ընթացքը

Խթանման փուլում մտագրոհով և պրոբլեմային հարցերով զրուցում ենք երեխաների հետ ջրի առաջացման և նրա անհրաժեշտության մասին: Ինչի՞ց է առաջանում ջուրը, ինչ դեր ունի այն մարդու, բույսերի և կենդանիների կյանքում, որը՝ ինչպես է վերցնում ջուրը բնությունից: Նրանց հետ միասին դիտում ենք անձրևը, առվակների հոսքը, նկարների միջոցով ցույց ենք տալիս ջրի տարբեր տեսարաններ, պատմում անապատների մասին, որտեղ ջուր չկա, ներկայացնում ջրի անհրաժեշտությունը մարդկանց, կենդանիների ու բույսերի կյանքում:

Այնուհետև ներկայացվում է բնության մեջ ջրի շրջանառությունը, և ցույց տալիս գծանկարների միջոցով /օվկիանոսներից, ծովերից, գետերից ջուրը գոլորշիանում է, երկնքում կուտակվում, ապա անձրևի տեսքով թափվում է ցած և ներծծվում հողի մեջ/: Նշված տեղեկատվությունը երեխաների մոտ մատչելի ձևով ամրապնդելու համար քննարկում ենք նրանց ընթերցած «Ջրի կաթիլի շրջապտույտը» ստեղծագործությունը: Արտադասարանային ընթերցանության ժամանակ պետք է ստեղծել բոլոր պայմանները /նկար, ծաղիկների ցուցադրում/՝ երեխաների տրամադրությունը բարձր պահելու համար:

Իմաստի ընկալման փուլում ջրի շրջանառությունը պատկերող նկարի ցուցադրումից հետո երեխաներին հանձնարարում ենք բացատրական ընթերցանության մեթոդով ընթերցել հետևյալ հատվածը. «Օվկիանոսի մակերեսին՝ արևի վառ ճառագայթների տակ, ցատկոտում և խաղում էին ջրի անթիվ կաթիլներ: Նրանցից մեկն առաձնապես արագաշարժ էր: Նա մյուսներից մերթ ավելի բարձր էր ցատկում, մերթ փրփուրի հետ միասին թռչում ալիքի կատարին: Նա շատ էր ուզում հեռավոր ճանապարհորդության ուղևորվել:

«Գոնե արևն ինձ բարձրացներ»,- մտածեց կաթիլը: Եվ արևը ցած ուղարկեց իր կիզիչ ճառագայթները, որոնք, դիպչելով ջրին, բազմաթիվ փոքրիկ կաթիլներ վերբարձրացրին: Դրանց մեջ էր նաև արագաշարժ կաթիլը, որն ուզում էր ճանապարհորդել:

Փոքրիկ կաթիլներն արագորեն վեր բարձրացան, բայց չտեսան իրար, քանի որ տաք ճառագայթները նրանց վերածեցին անտեսանելի գոլորշու: Վերջինիս էլ քամին քշեց և տարավ հեռու: Եվ հանկարծ մեր փոքրիկ կաթիլը ներքևում տեսավ ոչ թե

օվկիանոսի ջինջ մակերսը, այլ խայտաբղետ ցամաքը՝ անտառներ, դաշտեր, գյուղեր... Նա երբեք նման բան չէր տեսել և շատ ուրախ էր:

Բայց հանկարծ վրա հասավ երեկոն, և ցրտեց:

Փոքրիկ կաթիլը սառեց, ծանրացավ, հանդարտ ու անտեսանելի կերպով կաթիլն ավելի սառեց և գոլորշուց կրկին վերածվեց ջրի կաթիլի: Բայց արդեն ցողի կաթիլ էր ծաղկի վրա:

Առավոտյան, երբ արևը բարձրացավ և իր ճառագայթներով տաքացրեց ամեն ինչ, մեր փոքրիկ կաթիլ ևս տաքացավ, վերածվեց անտեսանելի գոլորշու: Եվ նա ուրախությունից սկսեց վեր բարձրանալ:

Օրը տաք էր: Փոքրիկ կաթիլների մեծ քանակություն վերև բարձրացավ: Քամին դրանց ավելի ու ավելի վեր տարավ, այնտեղ, որտեղ օդը ցուրտ էր:

Պատմվածքը կարելի է ընդմիջել բացատրությամբ՝ տաք օդը՝ գոլորշին, արագ վերև է բարձրանում, որովհետև թեթև է, վերևում խտանում, սառչում և ծանրանալով ներքև է թափվում անձրևի, կարկուտի կամ ձյան տեսքով:

Եվ մեր փոքրիկ կաթիլն իր շուրջը տեսավ հազարավոր կաթիլներ: Դրանք խառնվեցին ու սեղմվեցին միմյանց: Ի վերջո կուտակվեցին մեծ ամպի մեջ: Քամին քշեց ամպը, և ավելի ու ավելի շատ կաթիլներ միացան իրար: Սարսափից անզգայացած՝ դրանց գլորվեցին ցած: Իսկ մարդիկ ասացին՝ «Անձրև եկավ»:

Մեր փոքրիկ կաթիլը աղբյուրի ջրերի հետ միասին ընկավ անտառ, ներծծվեց հողի մեջ, աղբյուրի ջրերի հետ միասին կրկին դուրս եկավ երկրի երես: Աղբյուրներից բոլոր կաթիլները լցվեցին աղմկալից առուն: Սա էլ սլացավ անտառից դաշտ, հոսեց ձորակով և վերջապես հասավ մեզ»:

Ընթեցումից հետո աշակերտներին տալիս ենք պրոբլեմային մի շարք հարցեր:

1. Ո՞րն էր օվկիանոսի կաթիլի ցանկությունը:
2. Ինչպե՞ս իրականացավ չարաճճի կաթիլի ցանկությունը:
3. Ինչպե՞ս է լինում, որ անձրև է գալիս:
4. Ինչպե՞ս են գոյանում աղբյուրի ջրերը:

Հարցերի միջոցով ամրապնդվում են երեխաների գիտելիքները: Պարապմունքի վերջում կարելի է առաջարկել երեխաներին արտասանել ջրի մասին

բանաստեղծություններ, օրինակ՝ Մ. Կորյունի «Արի, արի, զով անձրև», Գ. Գաբրիելյանի «Ամպիկի երգը» և այլն:

Կշռադատման փուլում ամփոփում ենք արտադասարանական ընթերցանության դասը՝ կարևորելով բնության դերը մարդու կյանքում:

Երեխաների մեջ ամրապնդում ենք այն գաղափարը, որը բնության պահպանությունը կարևոր արժեք է: Տնտեսական առումով ՀՀ-ի բնաշխարհը և բնական պաշարները՝ ընդերքը, հողը, ջուրը, օդը, բուսական, կենդանական և այլն, նրա ժողովրդի հարստությունն ու սեփականությունն են, ընդ որում՝ ոչ միայն ներկայիս ՀՀ քաղաքացիների, այլև նրանց սերունդների, որոնք հնարավոր է՝ նոր մոտեցումներ որդեգրեն իրենց սեփականությունը տնօրինելու հարցում: Ուստի բնությանը և բնական պաշարներին վերաբերող յուրաքանչյուր հարցում անհրաժեշտ է ելնել այն կանխավարկածից, որ «շրջակա միջավայրը մենք ոչ թե նվեր ենք ստացել մեր ծնողնե-րից, այլ պարտքով վերցրել ենք մեր զավակներից»: Ուստի բնական պաշարների օգ-տագործման հարցում հարկավոր է առաջնորդվել գալիք սերունդներին պատկանող սեփականությունը չյուրացնելու, այն օգտագործումից նրանց համար ապագայի լավ պայմաններ ստեղծելու սկզբունքներով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Բնապահպանական կրթության նպատակն է զարգացնել պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ, ձևավորել բնապահպանական գիտակցություն, իսկ բնապահպանական դաստիարակության նպատակն է աճող սերնդին ծանոթացնել բնության, շրջակա միջավայրի առանձնահատկություններին, պարզաբանել բնության կարևորագույն օրենքները և այն ուղիները, որոնց միջոցով կարելի է պահպանել ու վերարտադրել բնությունը:

Անհրաժեշտ է նախադպրոցական տարիքից նպատակաուղղված ձևով ձևավորել պատասխանատվություն շրջակա միջավայրի նկատմամբ, իսկ դրա իրականացումը հնարավոր է սովորողների ճանաչողական գործընթացում ուսուցման տարբեր մեթոդների կիրառմամբ, մասնավորապես, երբ նրանք ծանոթանում են Հայաստանի բուսական և կենդանական աշխարհի տեսակներին: Այդ գործընթացը ուսուցիչն իրականացնում է սովորողների հետ հատուկ աշխատանքի՝ բնապահպանական միջոցառումների, ցուցահանդեսների, էքսկուրսիաների, դիտումների կազմակերպման միջոցով:

Ուսուցիչը բնապահպանական հասկացությունների ձևավորման աշխատանքը սկսում է ուսուցման առաջին դասերից: Համապատասխան օրինակներով ցույց է տալիս մարդածին գործոնների ազդեցությունը բնության, շրջակա միջավայրի վրա: Սովորողի մոտ ամրակայվում է գիտակցություն, որ մարդու յուրաքանչյուր քայլը պետք է ուղեկցվի բնապահպանական գործունեությամբ:

Հարկ է նկատել, որ բնապահպանական կրթության գործընթացում դաստիարակությունը դիտարկվում է որպես կրթության արժեքային գործառույթ: Կրթությունն ու դաստիարակությունն այս դեպքում չեն տարանջատվում, ընդհակառակը՝ համատեղվում են իրենց նպատակներով ու խնդիրներով: Արիստոտելյան բնորոշմամբ՝ դաստիարակության գործում հմտությունների զարգացումը պետք է նախորդի մտքի զարգացմանը: Այլ կերպ ասած՝ ճշտորեն և նպատակադիր կիրառելով ուսուցման բազմաթիվ մեթոդներ՝ կրթում ու դաստիարակում ենք բնապահպանական գիտելիքներով զինված, բանիմաց ու գրագետ մարդ:

Կատարված ուսումնասիրության ընթացքում հաստատվեց մեր հետազոտության վարկածը՝ բնապահպանական գիտելիքի ձևավորման ու զարգացման կարևոր ուղիներից մեկը ռուսաց լեզվի դասընթացում արտադասարանական պարապմունքների կազմակերպումն է բնության գրկում։ Բնության գրկում դասի անցկացումը մեզ հնարավորություն տվեց առավել տեսանելի դարձնելու բնության մասին առարկայական գիտելիքը՝ ընդգծելով բնության պահպանության դերը յուրաքանչյուրիս կյանքում։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» ՀՀ օրենք, http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=1006:
2. «Բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ամբողջական ու միասնական ազգային համակարգի ստեղծման» հայեցակարգ, http://www.gov.am/files/meetings/2009/4087.pdf:
3. .Բնապահպանական կրթությունը մարզագետիններում և արոտավայրերում. Ուսուցիչների վերապատրաստման ձեռնարկ, Երևան, 2012:
4. Հայաստանի գետերի և վտակների կենսաբազմազանության ուսումնասիրությունը. Հայաստանում բնապահպանական կրթության մոդել, Երևան, 2010:
5. Դավթյան Մ. և ուրիշներ, Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ, Երևան, 2004:
6. Лаптев И. Д., Экологические проблемы: социально-политический и идеологический аспект, Москва, 1982: